## 60. Նախորդի տակին

(Լուս. № 49)

*ԺԳ դարի առաջին կես*

Հրատարակված է՝ Ջալ 25, Վիմ 247—248, Հար 280

1 *Ցանուն Այ, ես Վաչէ որդի Վաչուտին, ետու զիմ գրամագին Բաղալի այգին ի Շէն-*
2 *գաւիթ ի Սանահնի սբ Ածածինս. եւ առաջնորդ տր Յոհանէս եւ միաբանքս հաստատեցին զ-*
3 *Փիլիպոս առաքելո տաւնի պատարագ զամէն եկեղեցիքս Դաւթի՝ իմ եղբաւրն անխափան մինչեւ գալուստն*
4 *Քի: Եւ որ խափանել ջանա՝ պարտական է մեր եղծիս առաջի Այ:*

Տարընթերցում.— *1.* Ջալ ետու զիմ գրամագին Բաղալի այգին ի Շէնգաւիթ *կարդացել է* ետու զիմ դրամս ի գաւիթ (Սանահնի):

*2. 2-րդ տողում* Տր Ջալ *կարդացել է* սորա:

## 61. Մեծ գավթի հարավից հաշված երկրորդ սյան խոյակի վրա, Սարգսի խաչքարի կողքին

*ԺԳ դար*

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Կամաւն յԱյ ե[ս] — — աչէս զիմ ա(յ)գ-*
2 *ին Սամծէր — ·· ավի վախմ սբ*
3 *Ածածինս: Ով խաբան(է) դատի Այ:*

Ծանոթություն.— *1. Արձանագրության առաջին երկու տողերը գրված են խոյակի ձախակողմյան կողքի վրա, իսկ երրորդը՝ ճակատին: Թեև արձանագրությունը լավ է պահպանվել, բայց հագցրած շրջանակը որոշ մասերը փակել է և այժմ հնարավոր չէ լրիվ կարդալ:*

*2.* Սամծէր *այն գյուղի անունն է, որտեղ գտնվել է նվիրատուի այգին: Այդ տեղի անունը հիշատակվում է նաև № 62 արձ. մեջ:*

## 62. Մեծ գավթի հս պատին արտաքուստ

(Լուս. № 50)

*ԺԵ դարի վերջերքը*

Հրատարակված է՝ Ջալ 31, Դրիմ 66—67, Վիմ 248—249

1 *Կմւն Այ ամենայկալին, ես Բարսեղ արհե-*
2 *պիկպ, Թոռի Թոռն պր Արղութին, որդի պր*
3 *Վասակին, ավի վախմ Սամծէրու Բ էգ-*